ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
N 01/22

12.01.2022թ

Ք.Եղեգնաձոր

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը, ի դեմս Գլխավոր քարտուղար Ա.Կարապետյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ (Պետական մարմին), մի կողմից և Եղեգնաձորի Երկրագիտական թանգարան ՊՈԱԿ-ը՝ ի դեմս տնօրեն Կ.Ազատյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ (Կազմակերպություն), մյուս կողմից, այսուհետ միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մշակութային ժառանգության ծրագրի(ծրագրի դասիչ՝ 1075) շրջանակներում նախատեսված ընթացիկ դրամաշնորհը(այսուհետև՝ դրամաշնորհ) և ղեկավարվելով ՀՀ կառավարության 23.12.2021թ N 2121-ն որոշմամբ՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պետական մարմինը պարտավորվում է ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի 08.02.02.01. «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծրագրի իրականացման համար սույն պայմանագրի 2.1. կետում նշված միջոցները հատկացնել Կազմակերպությանը, իսկ Կազմակերպությունը ստանձնում է պարտավորություն 2022 թվականի ընթացքում պահպանել թվով 9479 թանգարանային առարկաներ, սպասարկել թվով 3000 թանգարանային այցելուների, թանգարանային առարկաները համալրել 40 միավոր առարկայով, կազմակերպել թվով 4 ցուցահանդես, թվով 10 թանգարանային առարկաներ վերականգնել:

2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրով կատարված Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 16999.0 (տասնվեց միլիոն ինը հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ 2792.6(երկու միլիոն յոթ հարյուր իննսուներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

2.2 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Պետական մարմինը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը փոխանցում է Կազմակերպության գանձապետական հաշվին՝ համաձայն հավելվածի:

3.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.2 Կազմակերպությունը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Պետական մարմնի ներկայացուցչի հնարավորությունը:

3.3 Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնել հաշվետվություններ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի թիվ 104-Ն հրամանի և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններին առընչվող այլ իրավական ակտերի:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 25-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վայոց Ձորի մարզպետարան
Ք.Եղեգնաձոր Շահումյան 5
ՀՀ ֆն գործառնական վարչություն
ՀՀ 900351074027

ՀՎՀՀ 08907717

Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Եղեգնաձորի,,Երկրագիտական թանգարան,, ՊՈԱԿ
Ք.Եղեգնաձոր Շահումյան 4
ՀՀ ֆն գործառնական վարչություն
ՀՀ 900358000298

ՀՎՀՀ 08902455

Գ. ԱՔԱՏՅԱՆ

Հավելված

11 հունվարի 2022թ կնքված պայմանագրի

N	Ծառայության անվանումը	2022թ վճարվելիք գումարները աճողական												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
		4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
1	2													
1	Ընթացիկ դրամաշնորհներ պետական-համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին		1725,3	3450,6	3996,9	5835,8	7442,0	8731,7	10091,6	11433,4	13378,2	15180,1	16999,0	16999,0
	Ընդամենը													

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀ ֆինանսների գործառ. վարչ.
Հ/Հ 90035100 4027
ՀԿՀՀ 08907717
Գլխավոր քարտուղար՝ Ա.Կարապետյան

Եղեգնաձորի երկրագիտական թանգարան ՊՈԱԿ
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 4
ՀՀ ֆինանսների գործառ. վարչ.
Հ/Հ 90035[illegible]0298
ՀԿՀՀ 08907[illegible]
Տնօրեն Ա. [illegible]